ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«_____»_____ 2026 **թվականի** N ____ -Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2025 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 19-Ի N 169-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 13-րդ հոդվածի 12-րդ մասի, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ մասի, 34-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի դրույթներով՝ **Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանին որոշում է.**

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2025 թվականի դեկտեմբերի 19-ի « Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի վարչական տարածքում շրջիկ առևտրի կետերին ներկայացվող պահանջները, պայմանները, ժամկետները, շրջիկ առևտրի իրականացման թույլատրելի վայրերը, դրանց տրամադրման (հատկացման) կարգը, պայմանները և գործունեության իրականացման ժամերը, ինչպես նաև վաճառվող ապրանքների կամ մատուցվող ծառայությունների չթույլատրվող տեսակները սահմանելու մասին» N 169-ն որոշման 1-ին կետով հաստատված հավելվածի 20-րդ կետի աղյուսակը լրացնել հետևյալ բովանդակությամբ՝ 8-12-րդ կետերով.

«

8	Սերգեյ Համբարձումյան փողոց	09^{00}-23^{00}	մինչև 7 օր
9	Ավտոկայանի հրապարակ	09^{00}-23^{00}	մինչև 7 օր
10	Անանիա Շիրակացի փողոց	09^{00}-23^{00}	մինչև 7 օր
11	Տրդատ Ճարտարապետ փողոց	09^{00}-23^{00}	մինչև 7 օր
12	Մինաս Ավետիսյան փողոց	09^{00}-23^{00}	մինչև 7 օր

»

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կ. ՄԱԼԽԱՍՅԱՆ

Ա. ԱՌԱՔԵԼՅԱՆ

Հ. ՎԱՐԴԱՆՅԱՆ

Հ. ՂԱԶԱՐՅԱՆ

Ա. ՉԱԴՐՅԱՆ

Ս. ՍԻՄՈՆՅԱՆ

Ա. ՄԿՐՏՉՅԱՆ

Կատարող՝ Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի
Առևտրի և սպասարկման ոլորտի համակարգման բաժնի
պետի ծառայողական պարտականությունները կատարող Ա. Մկրտչյան

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2025 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 19-Ի N 169-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ

Կարգավորման ենթակա խնդրի սահմանումը և առկա իրավիճակը.

Շրջիկ առևտրի իրականացման համար գործող թույլատրելի վայրերի ցանկը չի ներառում համայնքի վարչական տարածքի այն փողոցները, որոնց նկատմամբ առկա է շրջիկ առևտուր իրականացնող անձանց պահանջարկը: Արդյունքում անհրաժեշտություն է առաջացել վերանայել և լրացնել թույլատրելի վայրերի ցանկը՝ հաշվի առնելով համայնքի տարածքում շրջիկ առևտրի արդյունավետ կազմակերպման անհրաժեշտությունը:

Կարգավորման նպատակները և ակնկալվող արդյունքը.

Սույն որոշման ընդունմամբ ակնկալվում է, որ որոշման ընդունումը կնպաստի շրջիկ առևտրի ոլորտում առկա հարաբերությունների առավել արդյունավետ կարգավորմանը, դրանց զարգացմանը, համայնքի տարածքում շրջիկ առևտրի կազմակերպման մակարդակի բարձրացմանը և համայնքային վերահսկողության արդյունավետության ապահովմանը:

Նոր փողոցների սահմանմամբ նախատեսվում է նաև ընդլայնել շրջիկ առևտրի իրականացման հնարավորությունները, նվազեցնել չթույլատրված կամ չկանոնակարգված առևտրի դեպքերի առաջացման հավանականությունը, ինչպես նաև տնտեսավարող սուբյեկտների համար ապահովել գործունեություն իրականացնելու հստակ վայրեր:

Ակտի նորմատիվ բնույթի հիմնավորվածությունը.

Քանի որ Գյումրի համայնքի վարչական տարածքում շրջիկ առևտրի կետերին ներկայացվող պահանջները, պայմանները, շրջիկ առևտրի իրականացման թույլատրելի վայրերը, դրանց տրամադրման (հատկացման) կարգը, ժամկետները, պայմանները և գործունեության իրականացման ժամերը, ինչպես նաև վաճառվող ապրանքների կամ մատուցվող ծառայությունների չթույլատրվող տեսակների սահմանումը պարունակում է վարքագծի պարտադիր կանոններ համայնքի վարչական տարածքում անորոշ թվով անձանց համար և ուղղված է կարգավորելու տվյալ ոլորտի հետ կապված հարաբերությունները, հետևաբար, համաձայն «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, սույն որոշումը կրում է նորմատիվ բնույթ:

ՏԵՂԵԿԱՆՔ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2025 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 19-Ի N 169-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ 2026 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ԾԱԽՍԵՐԻ ԵՎ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

«Հայաստանի Հանրապետության Շիրակի Մարզի Գյումրի համայնքի ավագանու 2025 թվականի դեկտեմբերի 19-ի N 169-Ն որոշման մեջ լրացումներ կատարելու մասին» որոշման ընդունմամբ Գյումրի համայնքի 2026 թվականի բյուջեում ծախսերի և եկամուտների էական ավելացում և նվազեցում չի նախատեսվում: